ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 33** քաղ. Մոսկվա

«Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 015/2011) փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 015/2011) կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում «Կանճրակ» դիրքում «Հատիկը մանր է, գնդանման» բառերը փոխարինել «Սերմերը մանր են, գնդանման» բառերով.

բ) տեխնիկական կանոնակարգի 6-րդ հավելվածի «ԱԹՄ-ն/ԺԱԹՄ-ն արտադրանքում (մգ/կգ)» սյունակում «կանճրակ (հատիկ)» բառերը փոխարինել «կանճրակ (սերմեր)՝» բառերով, «կանճրակ (հատիկը, յուղը)» բառերը փոխարինել «կանճրակ (սերմերը, յուղը)» բառերով։

2. Սահմանել, որ կանճրակի հատիկի՝ «Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 015/2011) սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը հաստատելու մասին փաստաթղթերը, որոնք ընդունվել են մինչեւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրը, վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը։

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիսը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով